

շնորհուհեցաւ որ այն տեղից մանուկները ազատ մուտք ունենան պետական գիմնազիոններում և համալսարաններում, որով այժմեական կրթութիւնը լայն սփռուեցաւ հրէից հասարակութեան մէջ և ամենուրեք բարի արդիւնքներ երեւեցան:

Չորրորդ շրջան. Այն ինչ պետութիւնը ճանաչեց հրէաների քաղաքական և քաղաքային իրաւանց հաւասարութիւնը, այսինքն գրեթէ 1848 թ.-ից յետոյ նոցա դաստիարակութեան ուսման կողմակերպութեան համար սկսուեցաւ մի նոր շրջան, որով համարեալ թէ բոլորովին վերացաւ նախկին խորթութիւնն ու զտուցումը: Գերմանական հրէաները (նմանապէս և Աւստրիայում) ենթարկուած են պարտադիր ուսման, յաճախում են հասարակաց քաղաքային և պետական ուսումնարանները, գիմնազիոններն ու համալսարանները. նախանձախնդիր են գերմանական կրթութիւնը փայելելու, որովհետեւ իրանք իրանց գերմանացի են զգում և ուղում են գերմանացի ևս ճանաչուիլ: Թէպէտ առաջուայ ժամանակներից ծագող դաւանական ուսումնարանները համայնքների հաշուով շարունակ պահպանվում են, բայց այդպիսիներից նորերը էլ չեն աւելանում: Եւ այս բանը զարմանալի չէ, որովհետեւ ինքը պետութիւնը հոգս է քաշում իսրայէլացի աշակերտների և աշակերտուհիների կրօնական ուսման մասին ժողովրդական քաղաքային և միջնակարգ ուսումնարաններում: Աւստրիայում օրէնք է սահմանած, որ եթէ մի գլխոցում իսրայէլացի աշակերտների թիւը քսանից անցնի, դպրոցը պարտաւոր է հոգալ նոցա կրօնական ուսումը: Իսրայէլացի կրօնուսոյցները գրեթէ հաւասար չափով իրաւունքներ են փայելում քրիստոնեայ կրօնուսոյցների հետ: Այսպէս ուրեմն սոսկ հրէական ուսումը սահմանափակուել է միայն այն չափով, որ այնու իրանց կրօնական դաստիարակութեան պէտքը լրանայ: Այդ բանին են ծառայուլ ա. հոգեւոր ուսումնարանները: Թէպէտ հասարակաց ուսումնարաններում իսրայէլացի աշակերտներին իրանց կրօնն է աւանդվում, սակայն քնականաբար այդ կրօնի համար գոյութիւն պիտի ունենան հոգեւոր ուսումնարաններ:

որ և ամենայն հրէական համայնք իւր պիտոյից համար պահպանում է: Երրայերէնը, որ հոգեւոր պաշտաման և ս. Դրոց լեզուն է, հարկաւ հրէական հոգեւոր կրթութեան էական մասն է կազմում: Եւ բ. Աստուածաբանական դպրոցներ. ժամանակի պահանջների համեմատ գիտական կրօնուսոյցներ և բարբիներ պատրաստելու համար հիմնուել են այդպիսի դպրոցներ Կասսէլում, Բերլինում, Միւնխէրում, Հաննովէրում, Բրեսլաւում, Վիեննայում, որոնց ծախքը մեծ մասով ժողովուրդն է քաշում, բայց տէրութիւնն էլ մասամբ աւելացնում է վերան իւր նպաստները:

(Encyklopädisches Handbuch der Pädagogik).

Ս. Մ.



ՄԻԼԻՈՆՆԵՐ ԵՒ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ:

Այս վերնագրով ակադեմիկ Ի. Թ. Եանժուլը Մոսկուայի պատմաբանական թանգարանի դահլիճում, այս տարուայ փետրուարի 21-ին մի հրապարակախօսութիւն կարդաց, որից քաղում ենք հետեւեալը.

«Մեծ. պ. պ. — սկսեց յարգելի դասախօսը — գիտէք, թէ որքան մեծ է կուլտուրական աշխարհի հարստութիւնը և ինչպիսի թուով կարելի է բնորոշել այն Վիճակագրների հաշուով լուսաւոր տէրութիւնների հարստութիւնը հասնում է 703 միլիւնարդ. հսկայական գումարի, Սրպէս զի մի փոքր գաղափար կազմէր այդ գումարի մեծութեան մասին, բաւական է ասել, որ եթէ այդ փողերը դարձնէք ռուսաց արծաթեայ բուրլիանոցներ և իրար վրայ դարսնէք, այն ժամանակ կ'ստանանք մի այնպիսի սիւն, որի բարձրութիւնը 5 անգամ աւելի կ'ըլլի երկրագնդի և լուսնոյ մէջ գտնուող տարածութիւնից, իսկ եթէ միևնոյն գումարը դարձնէք թուղթ հարկւր ռուբլիանոցներ և փոխէք գետնին իրար մօտ, նոքա կ'ըռնեն մի այնպիսի հրապարակ, որը երեք անգամ մեծ կ'ըլլէր ամբողջ Մոսկուայի բլանած տարածութիւնից, Տեսնենք այժմ թէ ինչ կերպով է բաժանուած այդ հարստութիւնը տէրու-

Թիւներն վրայ, 703 միլեարդից Անգլիայի վրայ ընկնում է 118 միլեարդ, Ֆրանսիայի—98, Գերմանիայի—80 և Ռուսաստանի—64 միլեարդ, սակայն այս բոլոր տէրութիւններից գերազանց են իրանց հարստութիւնով Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները, որոնց կարողութիւնը հասնում է 163 միլեարդի:

Ուրեմն ինչպէս տեսնում ենք, ընդհանուր հարստութիւնը հաւասարաչափ չէ բաժանուած տէրութիւնների վրայ. սակայն այդ անհաւասարաչափութիւնը անհամեմատ աւելի զգալի է լինում այն դէպքում, երբ ի նկատի ունենանք, թէ արդեօք ինչպէս է բաժանուած ամեն մի տէրութեան հարստութիւնը իւր ժողովուրդի մէջ, Շարմանի հաշուով միացեալ Նահանգներում ժողովուրդի միայն $\frac{1}{4}$ միլիոնը տիրապետում է 120 միլեարդ րուբլու, իսկ միւս մնացած 59 $\frac{3}{4}$ միլիոն ժողովուրդի մօտ գտնվում է միայն 43 միլեարդ: Այսպէս ուրեմն տէրութեան հարստութեան մեծադոշն մասը հաւաքուել է ժողովուրդի ամենաշնչին մասի մօտ (Միացեալ Նահանգներում ներկայումս կան 70 հարուստներ, որոնցից ամեն մէկը ունի 37 միլիոն գոյլար կարողութիւն): Հիմայ տեսնենք, թէ ինչպէս պէտք է ռզտուել այդ միլիոններից, կամ ինչպէս գործադրել նրանց:

Այս յառաջարանից յետոյ յարգելի դասախօսը անցաւ Ամերիկայի նշանաւոր միլիոնատէր Վորնէջիի գրքի պարզարանութեան:

Այդ գրքի մէջ, որ լոյս տեսնելու օրից գըրաւեց հին և նոր աշխարհի լուրջ ուշադրութիւնը, հեղինակը յայտնում է մի շարք համակրելի կարծիքներ հարստութիւնից օգտուելու մասին: Այս երեւելի հեղինակութեան գլխաւոր միտքը կայանում է նորանում, որ եթէ մէկը ուզում է նպատակաւորմար ու արժանաւայել կերպով գործադրել իւր հարստութիւնը, պէտք է անէ այդ կենդանութեան միջոցին:

Վորնէջին բողբոջում է այն մարդկանց դէմ, որոնք իրանց հարստութիւնը թողնում են ժառանգներին. սոքա յոյս դնելով ժառանգութեան վրայ, սովորում են փարթամ կեանքի և անգործունէութեան, բարոյապէս ապականուում են, իւրայնելով յաճախ բազմաթիւ փառ հակումներ և պակասութիւններ: Այս պատճառաւ ժառանգներին բաւական է միայն ապահովացնել, բայց ոչ թէ տալ ամբողջ հարստութիւնը:

Վորնէջին զանգատվում է նոյնպէս մեր ժամանակի բարեգործութեան եղանակի մասին, որը կայանում է գլխաւորապէս ողորմութեան և ընծայարարութեան մէջ, Այս տեսակ բարեգործութիւնը, Վորնէջիի կարծիքով, անբարոյականացնում է ժողովուրդին և ապականում նրա ամբողջ կազմուածքը:

Հարուստը պիտի լինի իւր կարողութեան կառավարողը և անձամբ դօրծ զնէ բարի գործերի համար, Բայց ինչ բաներ են այդ բարի գործերը, նախ և առաջ ընթերցարաններ ու համալսարաններ հիմնելը, համալսարանների մասին, մանաւանդ Միացեալ Նահանգներում: հարուստները պարտաւոր են ունենալ առանձին հոգացողութիւն, որովհետեւ կառավարութիւնը հրաժարվում է յանձն առնել իւր վրայ ներանց պահպանութիւնը. ապա հիւանդանոցների, հիւանդապահ կանանց համար ուսումնարանների, ժողովրդական ապաստանարանների, այգիների, որոնք մեծ նշանակութիւն ունին առողջութեան համար, լողարանների, բաղանիքների և վերջապէս եկեղեցիների և մատուռների: Վորնէջին ինքը վերին աստիճանի կրօնասէր մարդ է և համոզուած լինելով, որ եկեղեցին ունի մարդու հոգեկան, բարոյական զարգացման համար շատ բարձր նշանակութիւն, և եթէ նա դրել է եկեղեցին իւր ծրագրի վերջը, այդ հանգամանքը պարզվում է նրանով, որ ինքը, Վորնէջին, ապրում է Ամերիկայում, որտեղ կան բազմաթիւ աղանդաւորներ, որտեղ եկեղեցին համազգային հաստատութիւն չէ, և հետևապէս չէ կարելի այստեղ պահանջել բոլոր հարուստներից, որ նոքա անխորի եկեղեցիներ հիմնեն ինչպէս պէտք է հիմնեն ընթերցարաններ, հիւանդանոցներ և ուրիշ բարեգործական հիմնարկութիւններ:

Վորնէջիի գիրքը ենթարկուեց լուրջ քննադատութեան աշխարհահռչակ ծերունի Վլադստոնի կողմից, որը մեծ համակրութիւն է ցոյց տալիս Վորնէջիի գաղափարներին, համաձայն է նրա հետ, պարզարանում է նրա մտքերը և որպէս զի իրականութիւն ստանան այդ մտքերը՝ առաջարկում է հիմնել մի «ընդհանուր մարդասիրական ընկերութիւն»: Այս առթիւ Վլադստոնը ստացաւ բազմաթիւ նամակներ, որոնցից նշանաւոր են կարգինալ Մանինգի (կաթոլիկ արքեպիսկոպոսի) նամակը, Լոնգոնի գլխաւոր բարբի Ալբերի և հռչակաւոր բողոքական հոգեւորական Հիւգօյ Նւգի գրութիւնները, Իւարից տարբեր գաւառութեանց վերոյիշեալ երեք ներկայացուցիչները ջատագովում են: Գարդասիրական ընկերութեան կազմակերպելու բարի գործը, Վորնէջիի գրքի միտքը պարզարանելուց յետոյ, դասախօսը ծանօթացրեց իւր ունեղիրներին՝ Նիէյի բարեգործական հիմնարկութեան հետ (գտնւում է Վրէդդէնում), իբրև փառաւոր օրինակ այն հարուստների համար, որոնք ձգտում են իրանց միլիոններով ծառայել մարդկութեան, բայց չը գիտեն այդ միլիոնները գործադրելու եղանակը:

Այս հիմնարկութիւնը (Ճեմարանը) ունի մի հարուստ և փառահեղ մատենադարան՝ ընթերցարանով հանդերձ, որտեղ կարելի է գտնել բոլոր գիտութիւններին վերաբերեալ հարկաւոր գրքերը: Այստեղ կարգում են դատախառութիւններ Գերմա-

նական և արտասահմանի համայնարանների առաջ-
նակարգ դիմերը:

Պրոֆ. Եանժուլը իւր դասախօսութեան վեր-
ջը կանգ առաւ Ռուսաստանի և մասնաւորապէս Մոս-
կուայի վրայ: Բարեսրտութիւնը, ասաց նաւ եղել է
մշտապէս ռուս մարդու յատկանիշը, որին ապացոյց
կարող են լինել ռուս միլիտանտներէրի արած բազմա-
թիւ խելացի ու նպատակայարմար նուիրատուու-
թիւնները: Յաւային այն է՝ որ այդ հարուստները
իրանց բարեգործութեամբ շատ միակողմանի են,
մեծ մասամբ զոհողութիւններ են անում մի որոշ
նպատակի համար, անուշադիր թողնելով ժողովուր-
դի ուրիշ անհրաժեշտ պահանջները: Աւերման ցան-
կանք, ասաց դասախօսը, որ Ամերիկայում ձգած
սերմը, Կորնէլիի ձգած այն սերմը, որի համար
Անգղիայում Գլադստոնը դուշակել է արգիւնք 1 ին-
—30, տեղափոխուելով մեր հողի վրայ, տայ գոնէ
մի համեստ արգիւնք 1 ին—3, ունկնդիրների բու-
որն ծափահարութիւնը խլացրեց յարգելի պրո-
ֆեսորի վերջին խօսքերը:*

* Русское Слово № 54.

Յ. Ա.



1897 ԹՎ ԸՆԹԱՏԳՈՒՄ ՏԵՂԻՊՈՒՆԵՑԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱ-
ԿԱՆ ԶԵՆՈՒՄԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵ-
ԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Հիւսիսային թեւեռներ. — Բեկոններում նոր եր-
կիրներ գտնելու համար արած փորձերից վերջինը
և ամենահամարձակն է Էուեդալի Անդրէ Էէնէ
գիտնականի փորձը հիւսիս. բեկոնի հասնելու: Թու-
լիսի 11-ին (Թուրիս 29) Էպիցրերգէն կղզու հիւ-
սիսային ափերից Անդրէն և իւր երկու բնակները՝
Էտէյներգ և Ֆրանկէլ, սակաւաթիւ գիտողների
ներկայութեամբ, որոնք ծանապարհ էին գնում նո-
յա ջերմագին բարեմաղթանքներով և ծափահարու-
թիւններով՝ օդապարիկ նստան: Օդաչու նաւը 290
—300 մետր բարձրանալուց յիսոյ, սկսեց լողալ
օդի մէջ դէպի հիւսիս և անյայտացաւ նոցա աչքից,
Ինչ եղաւ Անդրէի օդապարիկը՝ մինչև այժմ ոչինչ
յայտնի չէ: Միմեանց հակասող լուրեր են պատում
նորա դարձին սպասող շրջաններում: Ոմանք ասում
են, թէ տեսել են նորա արձակած լրարեր ազա-
նուն միւսները պատմում են թէ Սպիտակ ծովում
օդապարիկի նման մի բան է երևացել էլն:

Այն տարածութիւնը, որ Անդրէն մտադիր էր
կտրելու Էպիցրերգէնից նախ դէպի հիւսիս, ապա
դէպի Ալեասկա թերակղզին կամ արեւելեան Սիբիրիա,

հաւասար է 3600 կիլոմետրի, որ կարելի է անցնել
6 օրում: Իսկ Անդրէն ամենաշատը 10 օրում անց-
նելու յոյս ունէր: Սակայն անցան մի քանի տա-
նեակ օրեր և ամիսներ, բայց օդաղնացներից ոչ մի
լուր չկայ:

Միւս կողմից Էուեդալի և Գանէմարքան կաղ-
մակերպում են երկու գիտնական արշաւներ դէպի
Գրէնլանդիայի հիւսիսային ափերը, որտեղից վեր-
ջերս վերադարձաւ Ամերիկացի Պէտրի ծովակալը,
իւր հետ Եօրքի հրուանդանի մօտերից բերելով մի
ատուպ (météorite), անխառն երկաթի 45000 կիլո-
գրամով՝ ծանրութեամբ, որ և տեղաւորեց Նիւեօրքի
թանգարանում:

Շպիցբերգի կղզին. — Եւրոպայի հիւսիսային կող-
մում գտնուող Էպիցրերգէն կղզին երեւի շուտով մի
ամառնային կենդրոնատեղի կը դառնայ ծանապար-
հորդների համար: Կղզու Ազվէնտայ կայարանն ար-
գէն կանոնաւոր շոգնաւային երթևեկութիւն ունի
Համմերֆէստի հետ: Նորվեգիոյ կառավարութիւն
այնտեղ կառուցել էր փոստային գրասենեակ, ուր
ինչպէս յիշուեցաւ Երարատի մէջ, մինչև անգամ
հրատարակուում է մի թերթ Spitzbergen Gazette՝
անունով: Կղզին հարուստ է որսերով, որպի-
սիք են՝ սպիտակ արջեր, եղջերուներ, փոկեր եւն:
Ապրիլի 20-ից մինչև օգոստոսի 22-ը մի օր է և շա-
բուանակ արեւը հորիզոնի վերայ է կանգնած: Հաս
հետեւ չէ այն ժամանակը, երբ Ազվէնտայը կը
դառնայ նոր ձեւի մի գեղեցիկ քաղաք: Էպիցրերգէն
գտնւ է 16-րդ դարում Բարէնտ Հոլանդացին՝ 2ի-
նաստանի ծանապարհը փնտռելու ժամանակ:

Հարաւային թեւեռ. — 1897 թ. մի գիտնական ար-
շաւանք էլ ուղղուեց դէպի հարաւային բեկոն:

Հարաւում բեկոնային ցամաքն աւելի ընդար-
ձակ է, բայց և աւելի անձանօթ քան միւս բեկոնը:
Միայն նորա մի քանի ափերն են յայտնի, որ 1842
թ. բացեց ժամ Ռոսս գիտնականը, նաեւելով մինչև
750/0 հարաւային լայնութիւնը. ներկայ արշաւախմբի
նպատակն է ժամ Ռոսսի թեւի թողածը շարունակել:
Խմբի զլխաւորն է Գէրլաշ Նաւի հրամանատարը՝ Է-
րա հետ են երեք օֆիցրներ, թնդանօթածիգ զօրաց
հրամանատար և ֆիզիկոս պ Գանկոն, պ Ռակովի-
ցա բուսաբանը, երկրաբան պ. Արտոմսկին (Էնհա-
ցի), մի հարուստ անգղիացի բժիշկ պ. Կոօգ և մի
քանի նորվեգիացի հմուտ սառույցներում վարժուած
ու զիմացկուն նաւաստիներ: Արշաւախումբը վեր-
ցրել է նաև օդապարիկի սարք, ի դէպս գործածելու
համար: Բացի դրանից ունի ծանապարհի բոլոր յար-
մարութիւնները և 300,000 ֆրանկ գրամագուլան, որ
մասամբ հոգացել է Բելգիոյ կառավարութիւնը, իսկ
մասամբ մասնաւոր անձինք: Նաւը օգոստոսի 4/16-ին
մեկնեց Անգղիական ափից, նա Ռիօ Ժանէյրօյի
մօտով կանցնէ և Հօրն հրուանդանի մօտ ձմերկուից